2018, ՀՈԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 19 (519)

Էջմիածնի Կաթողիկոսություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

10 հոկտեմբերի

Բուենոս Այրեսի Մխիթարյան վարժարանի սաներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Մխիթարյան վարժարանի մի խումբ սաների՝ առաջնորդությամբ Հայաստանում Մխիթարյան կենտրոնի տնօրեն հայր Եղիա վրդ. Քիլաղայանի:

Նորին Սրբությունն իր հայրական սերն ու օրհնությունը բերեց պատանիներին՝ ուրախություն հայտնելով համայն հայության նվիրական սրբավայր այցի առիթով:

Արգենտինացի ուխտավորների հետ զրույցում Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ Մխիթարյան վարժարանի ուսուցիչների նվիրյալ եւ նախանձախնդիր աշխատանքին եւ նկատեց նաեւ, որ հայրենիք այցն ավանդույթ է դառնում՝ նպաստելով, որ Հայաստանին միայն դասագրքերից ծանոթ աշակերտներն իրականում հաղորդ դառնան հայ ժողովրդի սովորույթներին ու սրբություններին: Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ այցը հավասարապես խանդավառությամբ պիտի լցնի վարժարանի ոչ միայն հայ, այլեւ օտարազգի սաների հոգիները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ զրույցում պատանի ուխտավորները նաեւ պատմեցին իրենց տպավորությունների մասին, տեղեկություններ փոխանցեցին իրենց կրթական հաստատության, հետաքրքրությունների եւ ընտանիքների վերաբերյալ:

Նորին Սրբությունը սաներին մաղթեց բարի կեցություն, ուրախ, ոգեշնչող եւ հոգեւոր ապրումներով հարուստ օրեր Հայաստանում:

Նորաօծ եկեղեցականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոկտեմբերի 7-ին Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում քահանայական ձեռնադրության արժանացած 7 քահանաներին՝ ուղեկցությամբ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի:

Մայր Աթոռի լուսարարապետը Նորին Սրբությանը ներկայացրեց նորաօծ հոգեւորականներին՝ հայցելով Հայոց Հովվապետի հայրական օրհնությունն ու պատգամը: Այս առիթով իր ուրախությունն արտահայտեց նաեւ ձեռնադրող Առաքել արքեպիսկոպոսը՝ նորաօծներին մաղթելով բարի հովվական առաքելություն:

Ողջունելով քահանա հայրերին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհություն հայտնեց Երկնավորին, որ նոր մշակներ է հասցնում Հայոց Եկեղեցուն: Նորին Սրբությունը, ընդգծելով հոգեւորականի դերակատության կարեւորությունը, նշեց, որ բազմաթիվ համայնքներ դեռ սպասում են իրենց հոգեւոր հովիվներին: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ քահանաները հաստատուն կլինեն իրենց հովվական գործունեության մեջ եւ իրենց արդյունավետ ծառայությամբ կնպաստեն ժողովրդի հոգեւոր կյանքի պայծառությանը եւ Եկեղեցու շենացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց ձեռնադրող Առաքել սրբազանին՝ իր ստանձնած պարտականության համար, ինչպես նաեւ լուսարարապետ Հովնան սրբազանին, ում հոգեւոր տեսչության ներքո քահանաներն իրենց սարկավագական ծառայությունն էին բերում մինչ ձեռնադրությունը:

Նորընծաների անունից Սիոն քահանա Հարությունյանը երախտիքի խոսք ուղղեց Նորին Սրբությանը՝ խոստանալով արդարացնել Հայոց Հայրապետի հույսերը եւ անսակարկ ծառայել երկնավոր Տիրոջը եւ հայ ժողովրդին:

ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ դիվանագիտական առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում ավարտող Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Միլսի հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ ԱՄՆ-ի ժողովրդի եւ

իշխանությունների կողմից երկրին բերած մշտական զորակցությանը, հայ-ամերիկյան հարաբերություններին՝ գնահատելով նաեւ դրանց ամրապնդման եւ զարգացման գործում դեսպանի ներդրած ջանքերը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայաստանում պաշտոնավարման տարիներին դեսպանն ականատես եղավ պատմական մի շարք իրադարձությունների:

Իր հերթին ԱՄՆ-ի դեսպանը, ուրախություն հայտնելով Հայաստանում իր ծառայությունը բերելու առիթով, նշեց, որ թողնում է երկիրը՝ նրա ապագայի հանդեպ մեծ հույսերով: Պրն Միլսը գոհունակությամբ հաստատեց, որ այս տարիներին հնարավորություն է ունեցել ճանաչելու հայ ժողովրդին, ավելին իմանալու ժողովրդի կյանքում Հայոց Եկեղեցու կարեւոր դերի եւ պատասխանատվության մասին, ինչպես նաեւ ծանոթանալու ազգային ավանդույթներին եւ սովորություններին:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով ղարաբաղյան հակամարտությանը եւ սահմանին արձանագրվող անցանկալի միջադեպերին, որոնց հետեւանքով երիտասարդ կյանքեր են ընդհատվում, տության խաղաղ կարգավորմանն ի նպաստ, Մինսկի խմբի շրջանակներում, ԱՄՆ-ի կողմից գործադրվող ջանքերի կապակցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մտահոգությամբ խոսեց նաեւ երկրի առջեւ ծառացած մարտահրավերների, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական կյանքի մասին: Անդրադառնալով ներքաղաքական իրավիճակին՝ Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ կգտնվեն բարվոք լուծումներ փոխհասկացողության ոգով եւ երկխոսության ճանապարհով: Նորին Սրբությունը շեշտեց, որ հայ ժողովուրդն իր քրիստոնեական հավատի շնորհիվ լավատեսությամբ է մշտապես հաղթահարել կյանքի դժվարությունները եւ արձանագրել բարի արդյունքներ:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ԱՄՆ-ի դեսպանն անդրադարձան նաեւ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում կազմակերպված «Հայաստան» ցուցահանդեսին՝ բարձր գնահատելով կատարված աշխատանքը:

Վերջում Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց դեսպանին՝ հետագա իր ծառայության մեջ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

10 հոկտեմբերի

Հնդկաստան բուժման մեկնող երեք զինվորականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայրենիքի պաշտպանության համար ռազմական գործողությունների հետեւանքով հաշմանդամություն ստացած երեք զինվորականներին՝ ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի: Նրանք առաջիկա օրերին կմեկնեն Հնդկաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ ստանալու անհրաժեշտ բուժումն ու վերջույթների պրոթեզավորումը: Սա երկու տարվա ընթացքում զինվորականների չորրորդ խումբն է, որ այս նպատակով մեկնում է Կալկաթա:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բերելով զինվորականներին, նշեց, որ հպարտություն է տեսնել հայրենյաց պաշտպանների, ովքեր պատրաստ են իրենց կյանքն ընծայել հայրենիքին: «Ձեր կողմից դրսեւորած այդ քաջարի ոգին արդեն իսկ հերոսություն է մեզ համար»,- ընդգծեց Նորին Սրբությունը՝ փաստելով, որ Մայր Աթոռը հետագայում եւս շարունակելու է այս առումով իր զորակցությունը բերել Հայոց բանակին:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ անհրաժեշտ այս բուժումը կօգնի զինվորականներին կազմակերպել իրենց հետագա կյանքը եւ ծառայությունը:

Իրենց հերթին զինվորականները երախտագիտություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ հոգածու վերաբերմունքի, Եկեղեցու ազգապահպան առաքելության եւ բանակաշինության գործում ունեցած մեծ ներդրման համար, պատասխանեցին նաեւ իրենց կյանքի եւ ծառայության վերաբերյալ Նորին Սրբության հարցումներին:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց զինվորականներին՝ մաղթելով, որ ամենակալ Տերը պարգեւի նրանց ուժ եւ եռանդ՝ նորանոր հաջողություններ արձանագրելու կյանքում եւ ապրելու հարատեւ խաղաղության մեջ:

13 հոկտեմբերի

Կանադայի վարչապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կանադայի վարչապետ Ջասթին Տրյուդոյին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի:

Նորին Սրբությունը ողջունեց Կանադայի վարչապետի առաջին պաշտոնական այցը Հայաստան՝ հույս հայտնելով, որ այն ավելի պիտի խթանի հայ-կանադական հարաբերությունները եւ նպաստի առկա գործակցության առավել ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հաստատեց, որ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի բարեհաջող անցկացումը Հայաստանում առիթ դարձավ տարբեր երկրների միջեւ հարաբերությունների խորացման, նոր կապերի եւ գործակցության հաստատման եւ հնարավորություն ընձեռեց Ֆրանկոֆոնիայի կազմակերպության անդամ երկրներին ճանաչելու հայ ժողովրդին եւ հաղորդ դառնալու նրա իղձերին, երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կանադայի վարչապետին ներկայացրեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին հայ ժողովրդի հետ միասին դիմագրավել է դարերի դժվարություններին ու փորձություններին, կրել նույն տառապանքներն ու զրկանքները, ապրել նրա իղձերով եւ տեսիլքներով: Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձավ Հայոց ցեղասպանության եւ խորհրդային տարիների հետեւանքով Հայոց Եկեղեցու կրած

կորուստներին եւ ներկայում Եկեղեցու կողմից տարվող գործունեությանը տարբեր ոլորտներում՝ վստահություն հայտնելով, որ նոր իրողության պայմաններում Հայոց Եկեղեցին պիտի կարողանա առավել մեծ չափով շարունակել իրականացնել իր առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր վերազարթոնքի կերտման ու միասնականության ամրապնդման գործում:

Գարեգին Բ Կաթողիկոսը նաեւ գնահատանքով արձանագրեց այն ջերմ վերաբերմունքը, որ Կանադայի իշխանությունների կողմից մշտապես դրսեւորվում է հանդեպ հայ համայնքը եւ նրա ազգային-հոգեւոր կյանքը: Այս առիթով Նորին Սրբությունը նկատեց, որ Կանադայի հայ համայնքը գեղեցիկ կամուրջ է՝ երկու երկրների միջեւ հարաբերությունների զորացման եւ զարգացման համար:

Իր հերթին Կանադայի վարչապետն իր ուրախությունն արտահայտեց հանդիպման կապակցությամբ՝ ընդգծելով, որ երեք տասնամյակ անց մեծ հաճույքով է վերստին այցելել Հայաստան եւ մեծ պատիվ է համարում հյուրընկալվել հայոց հոգեւոր կենտրոնում եւ անխոս պիտի նպաստի երկու երկրների միջեւ կապերի խորացմանը:

Պրն Ջասթին Տրյուդոն, անդրադառնալով Կանադայում ապաստան գտած հայ համայնքին, մասնավորապես նշեց, որ Կանադան պետք է շնորհակալություն հայտնի երկրում հաստատված կանադահայերին, ովքեր հսկայական ներդրում են ունեցել Կանադայի կյանքի տարբեր ասպարեզներում: Վերադառնալով հայ-կանադական հարաբերություններին՝ վարչապետը շեշտեց, որ Կանադան հպարտ է Հայաստանի գործընկերը լինելու համար եւ շարունակելու է գործակցությունը տարբեր հարթություններում:

Կանադայի վարչապետը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նաեւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր իր այցելության տպավորությունները:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ պրն Ջասթին Տրյուդոն խոսեցին խաղաղ, բարօր եւ ապահով աշխարհի կերտման գործում միջկրոնական երկխոսության կարեւորության մասին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկայացրեց Հայոց Եկեղեցու ներգրավվածությունը միջկրոնական եւ միջեկեղեցական երկխոսություններում, ինչպես նաեւ տեղեկացրեց ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հոգեւոր առաջնորդների ջանքերի մասին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց քաղաքական գործիչների կարեւոր պատասխանատվությանը՝ մարդկային կյանքում ողբերգությունների կանխարգելման, անարդարության եւ տառապանքների հաղթահարման, աղքատության վերացման գործում: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը վստահությամբ ընդգծեց, որ Կանադայի երիտասարդ եւ եռանդուն առաջնորդն ապագայի իր տեսլականով մեծ նպաստ կբերի խաղաղ աշխարհի կառուցմանը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանը եւ թեմական խորհրդի ներկայացուցիչներ:



Կեչառիսի վանքում կատարվեց

Հոկտեմբերի 7-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Կոտայքի թեմի Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Ս. Պատարագի ընթացքում Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արք. Քարամյանի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունում սպասավորող յոթ սարկավագ:

Նույն օրը՝ առավոտյան, կատարվեց ընծայման կարգը: Ձեռնադրության ընթացքում Առաքել սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ սրբալույս Մյուռոնով օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաեւ նորաօծ եկեղեցականներին շնորհելով հոգեւոր նոր անուններ:

Ռուդիկ սրկ. Հայրապետյանը վերակոչվեց Սիոն քահանա, Սարգիս սրկ. Աբյանը՝ Գեւորգ քահանա, Աշոտ սրկ. Տիգրանյանը՝ Նարեկ քահանա, Ռուբեն սրկ. Կարապետյանը՝ Նահապետ քահանա, Վիրաբ սրկ. Սարգսյանը՝ Երեմիա քահանա, Ռուբեն սրկ. Սարգսյանը՝ Աստվածատուր քահանա, Գուրգեն սրկ. Բարսեղյանը՝ Տաճատ քահանա:

Ձեռնադրության արարողության ավարտին նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Այնուհետեւ Առաքել սրբազանը, քահանայական ձեռնադրության կապակցությամբ դիմելով նորաօծ քահանաներին եւ հավատացյալ ժողովրդին, նշեց. «Այսօր նվիրական եւ հիշարժան օր է մեզանից յուրաքանչյուրի համար, նաեւ ուրախության եւ հոգեկան բերկրանքի օր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ու մեր հավատացյալ ժողովրդի համար, բայց այն նվիրական, հավետ հիշարժան ու սուրբ է հատկապես մեր նորաօծ յոթ քահանաների համար:

Նորընծա՛ քահանա հայրեր, Աստծուն ձեր ընծայման աստվածահաճո ուխտի առթիվ ես գոհություն եւ փառք եմ վերառաքում առ Բարձրյալն Աստված՝ ասելով. «Փառք Քեզ, Տէր, փառք Քեզ, յաղագս ամենայնի փառք Քեզ, Տէր», որ արժանի արեցիր ինձ Քո սուրբ Սեղանին պատարագելու եւ կրկին քահանաների ձեռնադրության կարգը կատարելու»:

Սրբազան հայրը նաեւ իր երախտագիտությունը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ քահանայական այս ձեռնադրության կատարումն իրեն վերապահելու համար: Սրբազանն իր քարոզում ընդգծեց, որ այսօր հայ ժողովուրդը թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում եւ թե՛ Սփյուռքում կարիք ունի Հայ Եկեղեցու անդաստանում թխված հոգեւոր հացի եւ հոգեւոր սննդի:

Շարունակությունը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Շառլ Ազնավուրի ընտանիքին

Հոկտեմբերի 1-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել ՀՀ ազգային հերոս, Շվեյցարիայի Համադաշնությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի ընտանիքին:

«Ցավ էր Մեզ համար լսել մեր ժողովրդի մեծանուն եւ տաղանդաշատ զավակ Շառլ Ազնավուրի մահվան լուրը:

Վշտալի է կորուստն արժանավոր հայորդու, ով հարազատ ժողովրդի փառքն ու պատիվը հավելեց ու պայծառացրեց իր հռչակով, շնորհներով, բարձր արվեստով եւ աշխարհի տարբեր երկրների հայտնի բեմերում հնչեցրած իր անզուգական կատարումներով:

Այսօր մխիթարությամբ ենք անդրադառնում, որ բարեհիշատակ Շառլ Ազնավուրը հոգով ու սրտով միշտ եղել է Հայաստանի հետ, հպարտացել իր ազգային ինքնությամբ: Մեր ժողովրդին պատուհասած աղետալի երկրաշարժի օրերին Ազնավուրը երգեց ժողովրդի ցավը շատ հայտնի երգիչների հետ, իր բոլորանվեր ջանքերը բերեց Հայաստանի օգնության համար: Նրա հանրահայտ երգերի շարքում են նաեւ Հայաստանին, Ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված ստեղծագործությունները, որոնք վերստին բացահայտում են մեծանուն հայորդու հայրենասեր ու ազգանվեր ոգին:

Շառլ Ազնավուրի մահը կորուստ է ողջ աշխարհի համար, քանզի նա իր համաշխարհային ճանաչումով ու արժեքով նաեւ ողջ մարդկության զավակն է, որին գիտեն, սիրում են եւ ում համար այսօր աղոթում են ամենուր: Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ մեծանուն հայորդու հոգու հանգստության համար: Հոգելույս Շառլ Ազնավուրը մեզ թողեց իր վառ կերպարը, հիասքանչ երգերը, սերն ու բարությունը եւ երկրավոր ճանապարհը ավարտելով՝ շարունակում է իր ընթացքը դեպի հավերժություն եւ հավիտենական կյանք»,- ասված է Վեհափառ Հայրապետի ցավակցագրում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախագահեց Շառլ Ազնավուրի հուղարկավորությունը

Հոկտեմբերի 6-ին Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ աշխարհահռչակ հայորդի, ՀՀ ազգային հերոս Շառլ Ազնավուրի հուղարկավորության արարողությունը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր խոսքն ուղղեց Ազնավուր ընտանիքին, Հայաստանի Հանրապետության պետական այրերին եւ այլ ներկաներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես ասաց. *«Տխրությունն է պարուրել ամենքիս հոգիները: Հրաժեշտ ենք տալիս հայազգի աշխարհահռչակ զավակ, երգարվեստի ու մշակույթի մեծանուն երախտավոր, Հայաստանի Հանրապետության ազգային հերոս Շառլ Ազնավուրին: Ճանապարհում ենք նրան դեպի հավերժություն, ուր Տիրոջ հետեւորդները ժառանգում են հավիտենական կյանքը, աստվածապարգեւ երանությունն ու խաղաղությունը:*

Աստվածատուր շնորհներով զարդարյալ՝ մեր բոլորի սիրելի Շառլ Ազնավուրը, հասակ առնելով Ֆրանսիայում եւ սնվելով նաեւ այս երկրի հզոր մշակույթից, համամարդկային տարողունակության բարձրացրեց իր արվեստը, ընդունվեց ու մեծապես սիրվեց ողջ աշխարհում: Մենք ամենքս գիտենք եւ տեսել ենք Շառլ Ազնավուրին՝ իր նվաճումների մեջ՝ արվեստի բարձունքներում: Սակայն փառքի ու հռչակի ճանապարհը դյուրին չի եղել նրա համար: Ցեղասպանությունից մազապուրծ, տարագրյալ ընտանիքում ծնված հայորդին հաղթահարեց կյանքի բազում նեղություններ, իր նպատակին խոչընդոտող դժվարությունները եւ իրականություն դարձրեց երգելու եւ մշակույթին ծառայելու նվիրական երազանքը: Հատկանշական են նրա խոսքերը՝ որպես հավաստում իր զորեղ կամքի եւ առ Աստված ապավինության. «Անչափ շնորհակալ եմ Աստծուն, որ ինձ անցկացրեց այդ բոլոր փորձությունների միջով, երազելու եւ այդ երազն ապրելու հնարավորություն տվեց»:

Բարեհիշատակ Շառլ Ազնավուրը ողջ էությամբ ներշնչված էր արվեստով, ստեղծագործելու եռանդով, առանց որի, ինչպես ինքն է բազմիցս վկայել, չէր պատկերացնում իր կյանքը: Իր ստեղծագործություններում նա ինքնատիպ անկեղծությամբ ներկայացնում էր իր զգացմունքներն ու մտածումները, դրվատում սերը, բարությունն ու ազնվությունը, բացահայտում մարդկային ներաշխարհի գեղեցկությունն ու վսեմությունը: Նա գրավում էր մարդկանց իր պարզությամբ ու անմիջականությամբ, վեհացնում ունկնդիրներին իր յուրահատուկ հուզիչ երգի ու երաժշտության հմայքով, անզուգական կատարումներով: Այսօր մարդկությունը կրում է նրա լուսավոր պատկերն իր հոգում եւ հիշողությունների մեջ, ուր շարունակում են հնչել Ազնավուրի թովիչ ձայնն ու երգերը, հոգեբուխ խոսքերն ու առինքնող մտքերը:

Տաղանդաշատ հայորդին մեծ մարդասեր էր, մեծ հայրենասեր ու ազգասեր: Որքան ներհուն ու խորունկ էր նրա մարդկային անձը, այդքան էլ բազմազան ու ընդգրկուն էր Ազնավուրի երգարվեստը: Ոգու այս նրբությամբ նա մշտապես ապրեց Ֆրանսիայի ու Հայաստանի սիրով եւ նվիրումով: Շառլ Ազնավուրը մեր ժողովրդի միասնականության յուրօրինակ խորհրդանիշն էր: Նա միշտ ներկա էր իր հարազատ ժողովրդի ու հայրենիքի կյանքում, սրտակցում ու զորակցում էր հայրենի երկրին դժվարությունների մեջ, ապրում, շնչում եւ ուրախանում էր ազգի ձեռքբերումներով ու հաջողություններով: Նրա բազմաթիվ երգերի շարքում Հայաստանին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված իր ստեղծագործությունները վկայում են մեծանուն հայի հայրենանվիրումն ու ազգանվիրումը, իսկ Սուրբ Աստվածածնին նվիրված «Ավե Մարիա» երգի հիասքանչ կատարումները՝ նրա խոր հավատքն ու ջերմ սերն առ Աստված:

Արվեստին ծառայելով՝ Ազնավուրը խոսեց ու գործեց բոլոր ժողովուրդներին հասկանալի լեզվով, լուսեղեն հնչյուններով, համամարդկային արժեքներով, եղավ համերաշխության, արդարության, ազնվության քրիստոսավանդ պատգամների տարածող: Մեծանուն Շառլ Ազնավուրը, իր լուսավոր հետագիծը թողնելով պատմության մեջ եւ իր անմար հիշատակն ամենքիս սրտերում, այսօր փոխադրվում է հավիտենություն: Այդ հետագիծը նրա աստվածահաճո գործերի խոր ակոսն է՝ ձգված համամարդկային արժեքների անծայրածիր անդաստանում: Եվ այսօր նա, որպես համայն մարդկության եւ իր ազգի արժանավոր զավակ, իր թողած բարի ու արդյունաշատ վաստակի ոգեկան, երկնասլաց ճախրանքով ելնում է երկինք՝ հանդիպելու իր Արարչին եւ Աստծուն՝ Տիրոջ խոսքի համաձայն. «Եկեք, Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. Իե 34):

Ի խորոց սրտի աղոթենք, սիրելիներ, որ Ողորմածն Աստված երկնից օթեւաններում խաղաղության մեջ ընդունի նորոգ ննջեցյալ Շառլ Ազնավուրի հոգին, պարգեւի երանություն ու հանգստություն եւ Սուրբ Հոգու բյուր մխիթարությամբ սփոփի Ազնավուր ընտանիքի անդամների եւ բոլոր սգացյալների սրտերը:

Խունկ, աղոթք եւ օրհնություն սիրելի Շառլ Ազնավուրի լուսավառ հիշատակին»:

Տես էջ 4

քահանայական ձեռնադրություն

Սկիզբը՝ էջ 2

Այս կապակցությամբ Առաքել արքեպիսկոպոսը, դիմելով նորաօծ քահանաներին, ասաց. «Սիրելի՛ քահանա եղբայրներ, դուք 6–7 տարի սովորել եք Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ ճեմարանական տարիներին ձեր ձեռք բերած հոգեւոր գիտելիքներն անսակարկ կերպով պետք է մատուցեք մեր ժողովրդին՝ ձեզ վստահված հոտին: Ճեմարանը, որպես հոգեւոր գիտելիքների դարբնոց՝ հնոց, ձեզ ձուլել եւ դարձրել է մաքուր ոսկի, որպեսզի մաքուր սրտով, մաքուր հոգով բոլորանվեր եւ անմնացորդ կերպով ծառայեք մեր ժողովրդին, քանի որ ժողովուրդը, հանապազօրյա հացից ոչ պակաս, հոգեւոր հացի կարիք ունի: Քիչ առաջ դուք, սիրելի՛ քահանա եղբայրներ, հրաժարվեցիք աշխարհիկ կյանքից, ձեր աշխարհիկ անուններից եւ նոր անուններով ու նոր կյանք ստացած՝ ամենակարող Աստծո կամքով պետք է գնաք եւ ծառայեք մեր ազգին ու Եկեղեցուն: ...Ձեռնադրության ժամանակ դուք հրաժարվեցիք աշխարհից՝ աշխարհիկ կյանքից, աշխարհիկ ցանկություններից, ընչաքաղցությունից, նախանձից, հպարտությունից, չար ցանկություններից եւ խոսք տվեցիք վերցնել ձեր խաչը եւ հետեւել Քրիստոսին: Քրիստոսին հետեւել նշանակում է ձեր նոր կյանքն ապրել Ավետարանի պատվիրաններին համահունչ՝ բարությամբ, սիրով, ողորմածությամբ եւ անաղարտությամբ լեցուն կյանքով»:

Սրբազան հայրը նշեց նաեւ, որ մարդ արարածը՝ որպես արարչագործության պսակ, մշտապես պարտավոր է աղոթել եւ փառաբանել Աստծուն, սիրել իր նմանին, լինել հեզ, խոնարհ, անոխակալ, ողորմած, անհիշաչար ու եղբայրասեր:

«Քրիստոս խոնարհվեց Իր երկնային փառքից, մարմնացավ, մարդացավ, որպեսզի մարդը տեսներ, հետեւեր Նրան եւ աստվածանար: Հավատացեք, եթե դուք էլ, սիրելի՛ քահանաներ, հեզությամբ ու խոնարհությամբ լինեք այնտեղ, որտեղ ձեր կարիքը կա, լինեք հիվանդների, կարիքավորների, սգավորների կողքին եւ խոնարհությամբ ծառայեք ժողովրդին, դուք թե՛ Աստծո եւ թե՛ մարդկանց առաջ կմնաք վեհ, մեծ, խոնարհ ու հարգված հոգեւորականներ»,- հաստատեց Առաքել սրբազանը:

Քարոզի վերջում սրբազան հայրը կոչ արեց ներկաներին աղոթք բարձրացնել առ Բարձրյալն Աստված, որպեսզի նորաօծ քահանաներն առանց փորձության, աղոթքով ու աստվածապաշտությամբ անցկացնեն իրենց քառասնօրյա պատրաստության շրջանը եւ հաստատ ու անսայթաք մնան իրենց ուխտի մեջ:

«Ողջույնի» ժամանակ թեմի հոգեւորականները եւ Մայր Աթոռից ժամանած միաբանները բարձրացան խորան՝ շնորհավորելու երիտասարդ քահանաներին եւ համբուրելով նրանց մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ նրանցից ստանալու անդրանիկ «Ողջույնը»:

Նորընծա քահանաները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում քառասնօրյա պատրաստության շրջանից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Շառլ Ազնավուրի համար կատարվեց հոգեհանգստյան կարգ

Տես էջ 3

Հոկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանի եւ Ս. Էջմիածնի միաբանության, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ՀՀ ազգային հերոս, աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի հոգու խաղաղության համար:

Հոգեհանգստյան արարողության ավարտին Մայր Աթոռի դիվանապետն անդրադարձավ մեծանուն հայորդու դժվարին եւ ծանր, բայց միեւնույն ժամանակ հաջողություններով ու նվաճումներով լեցուն կյանքի ճանապարհին՝ նշելով, որ Շառլ Ազնավուրի կորստյան ցավով տրոփում է ոչ միայն համայն հայության, այլեւ արվեստասեր միջազգային ողջ հասարակության սիրտը:

«Դեպի արվեստի բարձունքը նրա ճանապարհը լեցուն է եղել խոչընդոտներով եւ մարտահրավերներով: Միայն երկու տասնամյակ նա հետեւողականորեն ու համառորեն մաքառել է արվեստասեր հասարակության կողմից սիրո եւ ճանաչման արժանանալու համար՝ հաղթահարելով տարբեր խոչընդոտներ: Նա իրապես մարտիկ էր, անձ, ով վերջապես բարձրացավ միջազգային եւ ֆրանսիական երգարվեստի օլիմպոս: Այսօր Շառլի անունը ճանաչված է ողջ աշխարհում: Նա խորհրդանշում է ոչ միայն հայ-ֆրանսիական բարեկամությունը, այլեւ նրա անունը խորհրդանիշ է դարձել մարդասիրության, բարեկամության եւ նեղյալների սրտերը սփոփող անձի: Շատերը վկայություն են բերել, թե ինչպես նրանք իրենց միայնության մեջ սփոփանք են գտել Շառլի խոսքերում:

Ֆրանսիայի նախագահը հուղարկավորության առիթով իր խոսքում արձանագրեց. «Շառլը, թողնելով իր երկիրը, եկավ հզորացնելու Ֆրանսիան»: Ես կավելացնեի, որ նա ոչ միայն հզորացրեց Ֆրանսիան, այլ նաեւ հավելեց ճանաչումը մեր ժողովրդի, մեծ զորակցություն ապահովեց Հայաստանին եւ մեր ժողովրդին»,- ի մասնավորի ընդգծեց Արշակ եպիսկոպոսը:

Սրբազանը նշեց նաեւ, որ Հայոց Եկեղեցու բոլոր տաճարներում հայ ժողովուրդն այսօր իր աղոթքն է բարձրացնում Շառլ Ազնավուրի հոգու հանգստության եւ խաղաղության համար:

Դարձիր ամենագեղեցիկ դեմքը

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ

Սկիզբը՝ թիվ 18

Մի բան պատմեմ ձեզ: Մի անգամ մի կին գնում է իր հոգեւոր հոր մոտ՝ զուգված, զարդարված, դեմքն ամբողջովին ներկած: Հոգեւորականը նայում է նրան ու ասում. «Ինչո՞ւ ես այսքան շպարվում, աղջի՛կս»: Կինը պարզամտությամբ պատասխանում է. «Որովհետեւ ուզում եմ գեղեցիկ լինել: Վա՞մ է, հա՛յր»: Հոգեւորականը պատասխանում է. «Բայց դու առանց այդ էլ շատ գեղեցիկ ես»: «Գիտեմ, շնորհակալ եմ»,- ասում է կինը՝ կարծելով, որ հաճոյախաստություն է անում իրեն: «Դա նկատի չունեմ, զավա՛կս,- ասում է հոգեւորականը,- նկատի ունեմ, որ շատ գեղեցիկ ես հոգով, անմման գեղեցկություն ունես մեջդ թաքցրած, որը չի երեւում այս աշխարհի բույրերի ու սեթեւեթանքների մեջ: Այդ գեղեցկությունը Սուրբ Հոգին է շնորհում մեզ, դա հոգու գեղեցկություն է, որն արտացոլվում է նաեւ մեր դեմքերի վրա: Ա՛յդ գեղեցկությունը փորձիր գտնել, աղջի՛կս, եւ այդ գեղեցկությունը ցույց տուր երեխայիդ, ամուսնուդ, աշխարհին: Բնական մարդ եղիր»:

Եվ բնականն ամենագեղեցիկն է. նկատե՞լ ես դա: Բնական ծաղիկները, օրինակ, այնքա՞ն գեղեցիկ են, արհեստականն ինչքան էլ գեղեցիկ լինի, բնական չի կարող դառնալ: Այժմ բնականին այնքան նման արհեստական ծաղիկներ են արտադրում, որ հաճախ չես տարբերում, հարցնում ես. «Բնակա՞ն են», եւ պատասխանում են. «Ո՛չ, արհեստական են, բնականին շատ նման»: «Նման» են, սակայն բնական չեն, չեն բուրում, չեն աճում, մեծանում, ծաղկում, գեղեցկանում ու ապա թառամում եւ թառամելուց հետո էլ դեռ հոտը պահպանում: Թառամած վարդերն էլի հոտավետ են, որովհետեւ գեղեկությունն իրենց մեջ է:

Գեղեցկությունը մեր մեջ է: Աստված ամեն ինչ գեղեցիկ է ստեղծել: Եվ քանի որ չենք բացահայտել այդ գեղեցկությունը եւ չենք փնտրում Աստծուն, որ «ավելի գեղեցիկ է բոլոր մարդկանցից» (մեջբերումը շարականից է, որ երգվում է Ավագ երեքշաբթի օրը), աղբյուրը գեղեցկության, այդ պատճառով փնտրում ենք այս աշխարհի գեղեցկությունը, կպչում ենք դրան ու հիվանդանում: Միլիոններ ու միլիարդներ են ծախսվում ամեն տարի՝ կոսմետիկայի արտադրության համար: Եվ ինչ գումարներ են կորչում գեղեցկությունը գտնելու համար, որն այդպես էլ չի գտնվում:

Շարունակությունը՝ էջ 5

Ստալինյան բռնաճնշումները եւ հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը

Սկիզբը՝ թիվ 18

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում բանտից Բակունցի գրած չորս դիմումները: Առաջին բավականին ծավալուն դիմումը գրված է 1936 թ. հոկտեմբերի 6-ին՝ ձերբակալությունից երկու ամիս անց: Պատմում է 1933 թվականից Չարենցի հետ իրենց խզված կապի մասին, երբ վերջինս քննադատել է հայ «ազգային մտավորականության տիպեր»-ին երգիծող իր ստեղծագործությունը: Խզումը խորացել է 1934-ին գրականության լեզվի հարցերի քննարկման դիսպուտում՝ «հենց գրական լեզվում Չարենցն ինքը ազգայնամոլության հետեւորդ է»:

Խզումն էլ ավելի է խորանում 1933 թ. ապրիլին «Գրական թերթ»-ում Մկրտիչ Արմենի տպագրած «Չարենցի եւ հարակից հարցերի մասին» խորապես ազգային բնույթ ունեցող հոդվածից իր հրաժարումդժգոհությամբ: Այս կապակցությամբ հիշեցնում է իր ինքնաքննադատական ելույթները, մտաբերում է Չարենցի դեմ իր ելույթը՝ Գրողների միության անդամությունից հրաժարվելու՝ վերջինիս 1935 թվականի մարտի 8-ի հայտարարության քննարկմանը:

Չարենցի հետ գրական եւ մարդկային տարաձայնությունների խորացման իրական դրդապատճառները բերելով՝ ավելացնում է. «... Ես ստեղծագործաբար վաղուց եմ գիտակցել խմբակային միջավայրի ամբողջ կործանարարությունը, ինչի համար էլ խզեցի կապերս Չարենցի, իսկ մինչեւ նա՝ գրողների ամբողջ խմբի հետ» (1, էջ 241):

Այնուհետեւ Բակունցը խոսում է խիստ մեկուսացման պայմաններում գտնվելու հոգեբանական ահավոր ծանրության մասին, հաջորդում է իր վիճակի գիտակցման ինքնախոշտանգող բարձրաձայն մենախոսությունը. «Փաստը մնում է անշրջանցելի. Ես մեկուսացված եմ: Այստեղից սկսվում է ամոթի տանջալի գիտակցումը, միլիոն անգամ բանտարկման փաստի վերապրումը: Օտարված եմ հանրությունից, ամոթն ստվեր է նետում նաեւ արված լավի վրա, ստվերում քո մասին եղած հիշողությունը, երկրի վրա աղմկում է ուրախությունը եւ, ինչպես կրճոններ ճոխ սեղանից, քեզ են հասնում առանձին անհստակ պատառիկներ: Մտածում ես մեկ ժամ, երկու, երեք, մեկ օր, երկու օր, մտածում ես հիմարանալու աստիճանի, մինչեւ հիշողությունդ փուլ է գալիս, եւ չգիտես՝ գիշեր է, թե ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կյանքը մնաց փակ դռան ետեւում:

Մտքերը հեռուն են գնում, իսկ ինչ կլինի հետագայում. ահա կվերջանա նախաքննությունը, ինչ է սպասվում հետո: <...> Երբ ես հարցնում եմ, թե ինչ է լինելու հետո, հուսահատվում եմ, գիտակցությունս մթագնում է, ջղաձգությունները խեղդում են կոկորդս...» (1, էջ 243):

Բակունցն իրեն նմանեցնում է մի մարդու, ով աղոտ հույսի հետ մեկտեղ նաեւ «մահվան հոտ է առնում»: Բակունցն ասում է՝ ես օճառի գործարանի տնօրեն չեմ, որ որտեղ էլ աքսորեք, ինձ համար միեւնույնը լինի, ես գրող եմ՝ կապված որոշակի լեզվի ու միջավայրի հետ, ուստի խնդրում եմ՝ եթե ինձ աքսորելու եք, աքսորեք Հայաստանի ծայրամասերից մեկը եւ ոչ թե օտար մի տեղ:

Գրողը սրանով հուշում է, որ իրեն աքսորեն եւ ոչ թե գնդակահարեն. «Ինձ գրելու ու կարդալու հնարավորությո՛ւն տվեք, ինձ գի՛րք ու մատի՛տ տվեք: <...>: Թողեք, որ ես մնամ Խորհրդային Հայաստանի հավատարիմ շունը» (1, էջ 245):

Նախավերջին դիմումը վերաբերում է իր դեմ Նաիրի Զարյանի գրած զրպարտչական հոդվածներին, որոնց ինքն այլեւս չի կարող պատասխանել: Իսկ Զարյանը Բակունցի դեմ տպագրել է մեկ տասնյակից ավելի չարախոսություն ու կեղծիք: Ասում է՝ եթե դրանք ճիշտ լինեն՝ «Հրամայե՛ք, ընկեր ժողկոմ, որպեսզի ծեծեն ինձ...» (1, էջ 269):

Վերջին դիմումում, որ գրել է գնդակահարությունից 5 օր առաջ, այլեւայլ հարցերի հետ մեկտեղ խոսում է իր գրած-ավարտած «Էրիմենյան մանրէ» կամ «Հայկական մանրէ» վիպակի մասին: Վիպակը ժամանակին շատերի ձեռքով է անցել՝ Խանջյան, Պետհրատի տնօրեն, առանձին գրողներ, բայց այն առ այսօր հայտնաբերված չէ:

«Մեղադրական եզրակացություն»-ը (6. 08. 1937) Բակունցին զրկում է ապրելու հույսից: Ըստ այդմ՝ նա «հակահեղափոխական տրոցկիստական նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի անդամ է», կենտրոնը պետք է ահաբեկչական գործողություններ կատարեր ընդդեմ ՀամԿ(բ)Կ եւ խորհրդային իշխանության ղեկավարների: Իբր այդ խումբն է 1934-ի դեկտեմբերի 1-ին կազմակերպել Կիրովի սպանությունը եւ նախապատրաստում էր համապատասխան ահաբեկչական գործողություններ ընդդեմ Ստալինի ու Բերիայի: Իբր Չարենցի հետ մեկտեղ ստեղծել էր հակախորհրդային գրական կազմակերպություն, կապված է եղել Մոսկվայի տրոցկիստական կենտրոնի հետ:

Գործը լսվել է փակ դատական նիստում, դատավճիռը՝ պատժի առավելագույն չափ՝ գնդակահարություն, ինչն էլ իրականացվում է 1937 թվականի հուլիսի 8-ին:

Բակունցը պաշտոնապես արդարացվել է 1955 թ. մարտի 2-ին:

Հայտնի է, թե ինչ տանջալի ձեւերով էին ստալինյան դահիճները դատապարտվածներից ցուցմունքներ կորզում, այնքան տանջալի, որ ոմանք չէին դիմանում օրեր շարունակ երկարող ամեն տեսակի հոգեբանական կտտանքներին, ծեծ ու ջարդին եւ, ուշքի չգալով, ավանդում էին հոգին:

Աշխարհի մեկ վեցերորդ մասում ծավալվող այս դառնաղի ողբերգության ամբողջ մահաշունչ ինդուստրիան հետագայում պատկերեցին գրողները՝ ստալինյան հալածանքներից նախկին տուժածները: Այս տեսակետից ոչ միայն գեղարվեստական, այլեւ հանրագիտական նշանակություն ունի Ալեքսանդր Սոլժենիցինի «ԳՈՒԼԱԳ արխիպելագ» բազմահատոր վեպը: Հրաշալի են Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակն ու սիբիրյան պատմվածքների շարքը: Գրվեցին նաեւ բազմաթիվ այլ հրաշալի վեպեր, վիպակներ, հիշողություններ:

Շարունակությունը՝ էջ 6

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15-18

Աղասին եւ վեպի մյուս կերպարները: Հրատարակումից ի վեր «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոս արդարացիորեն համարվել է ժամանակակիցների համար սիրելի դարձած, ռուս-պարսկական պատերազմում իր քաջագործություններով աչքի ընկած քանաքեռցի մի կտրիճ երտասարդ՝ «աղքատ ու մեռած» Աղասին, որին անձամբ ճանաչել է հեղինակը: Թերեւս այս պատճառով էլ վեպի առաջին ընթերցողները միմյանց փոխանցելիս այն բուն վերնագրով կոչելու փոխարեն անվանում էին «Աղասու պատմություն»:

Իրական պատմական անձնավորություն է նա, ում հետ բարեկամական կապերը մինչեւ հիմա էլ հիշում են քանաքեռցիների սերունդները: Բայց իրական-պատմական այս անձնավորությունը վիպական կերպարի նախատիպն է միայն, որին հեղինակը մարմնավորել է կերպավորման իր սկզբունքներով՝ մեր ժողովրդի բնավորության լավագույն գծերը եւ իր սեփական մտածումները խտացնելով նրա մեջ:

Աբովյանի մանկության տարիներին քանի՞ անգամ է Աղասին նրան խաղացրել իր ծնկներին, ծոցից հանել ու ցույց տվել այն թաշկինակը, որի մեջ հայության թշնամիների դեմ մղած կռիվներում վիրավորված հերոսի ոսկորների փշրանքներն էին: Այդ իրական հերոսի մասին ժողովուրդը երգեր է հյուսել եւ երգում է տարբեր առիթներով: Փառաբանվում են նրա առնական գեղեցկությունը, բնածին բարությունը, մարդասիրությունը, ուղղամտությունը, այդ «ջերմարյուն մարդու» քաջությունն ու հերոսականությունը վիպական գործողությունների մեջ գեղարվեստական արտահայտչամիջոցներով ու մանավանդ «առավելություններով» (չափազանցություններով - Մ. Նալբանդյանի խոսքն է սա) ցուցադրելով՝ նրան դարձրել է վիպական հերոս, մարդկային բնավորության անհատական եւ ընդհանուր գծերով հատկանշվող էպիկական գրական կերպար: Նա, որոշ իմաստով, նման է մեր էպոսի հերոսներին, օժտված է այն հատկանիշներով, որոնք էպոսն ստեղծած ժողովուրդը կամեցել է տեսնել նրանց մեջ:

Իզուր չեն փառաբանվում Աղասու «սուրահի բոյը, լեն թիկունքը, ղալամով քաշած կեռ-կեռ ունքերը», ահռելի ֆիզիկական ուժը, որի շնորհիվ նրան «Ասլան բալասի» (առյուծի կորյուն) էին կոչում («էնքան ղվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդու գոտիկը որ չէր տանում՝ գլխի ծերն էր հանում, հավի ճուտի պես պտիտ տալիս էլ եդ վերը բերում» կամ գոմեշի պարանոցը թրի մի հարվածով կտրում էր): Այս բարի հսկան (Աբովյանն ինքն է Հասան խանի հետ մենամարտի դրվագում նրան այսպես բնորոշել՝ «հսկայն Աղասի՝ թուրը սրտին դեմ արեց») խեղճերի, ծերերի ու որբերի պաշտպանն էր. «Որբ կամ աղքատ տուն մտնելիս յա սուփրեն էր բաց, յա քիսեն», ով հողը վարելու լուծ կամ եզ չուներ՝ իրենն էր տալիս եւ հաճախ էր ընկերների հետ թաքուն վարում անկարող ու անօգնական ծերերի հողակտորները:

Ճշմարիտ է այն բնորոշումը, թե Աղասին հեղինակի գաղափարական կրկնատիպն է վեպում (Պ. Հակոբյան): Իր մտածողությամբ ու գործելակերպով նա էականորեն տարբերվում է միջավայրի «պաղարյուն» մարդկանցից: Աբովյանը, սակայն, ինչպես նկատվել է, Աղասու կերպարը հարստացրել է նույն շրջանում գործած ուրիշ հայ քաջորդիների սխրագործություններով: «Հառաջաբանում» ներկայացված Կրեսոս թագավորի՝ լեզուն նոր բացված քսանամյա որդու՝ պարսիկ զինվորին ուղղված զայրալից կոչին՝ «Անօրեն, ո՞ւմ վրա ես թուր բարձրացնում...», նրա նման հայոց լեզվի իրավունքները պաշտպանող հեղինակին՝ «Էդ ո՞ւմ վրա եք թուր քաշել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում», որոտում է ընկերների հետ ջիրիդ խաղալուց (ձիախաղ) վերադարձող եւ «ախչիկ քաշելու» եկած ֆառաշներին պատուհասող Աղասին. «Դժոխքի՞ որդիք, էդ ո՞ւմ վրա եք էդպես կատաղել, ասենք թե հայը ձեն չի հանում, պետք ա նրան սաղ-սաղ ուտե՞ք... աչքերիդ լիսը կթռցնեմ էս սհաթը...»:

Չնայած հեղինակը երբեմն էլ ժողովրդական աշխույժ հումորով ծաղրում է իր համակրելի հերոսին («Էշ կերած, էշ մեծացած», «Գլուխը հաստ, ծուծը բարակ» եւ այլն), սակայն բնության ազատ զավակը, հանդերի ու անտառի ծառերի սիրահարը, ծնողների առջեւ՝ խոնարհ, աղքատի ու նաչարի ընկեր, արժանապատվությամբ լեցուն քսանամյա այդ հերոսն է ըմբոստանում (200-ից ավելի մարդ անտարբեր դիտում էր աղջիկ փախցնելու տեսարանը, եւ ոչ ոք չէր արձագանքում Թագուհու մոր աղերսագին օգնության կանչերին. «Տարա՜ն, տարա՜ն... աստվածասե՞րք, մոտ էկե՞ք... քոմակ արե՞ք, գլուխս լացե՞ք: Տունս կոխեցի՞ն, օջախս քանդեցի՞ն... աչքիս լիսը հանում ե՞ն, սիրտս դուս են ճոթռում, տո՛ր, մեկ հասե՞ք, ի՞նչ կըլի»: Հավաքվածներից ոչ ոք չէր կարող օգնել, ծպտալ չէր համարձակվում, որովհետեւ Թագուհուն տանող ֆառաշների պես համոզված էին՝ «Սարդարի հրամանին սարը չի՞ դիմանալ», իրենք ի՞նչ կարող էին անել: Այսպես էր Բարեկենդանը սուգի փոխվում, երբ հայտնվում է Աղասին:

Ռուս-պարսկական պատերազմի շրջանում Հայաստանը թշնամիներից ազատագրելու հույսով խանդավառ Աղասուն իր ընկերների հետ ընթերցողը տեսնում է Հայաստանի տարբեր վայրերում՝ Ապարանում, Լոռի-Փամբակում, Անիում, Խլղարաքիլիսայում (ներկայիս Գյումրի քաղաքին մոտ գտնվող Ազատանը) եւ այլուր, իր քսան քաջերով նա ամենուր կռվում է մեր ժողովրդի թշնամիների դեմ, հալածում եւ Հայաստանից վռնդում է հսկայամարմին Նաղի խանին, քուրդ աշիրաթապետ Օքյուզ աղային, Անիում մեն-մենակ կռվում է հայերի մի բազմություն գերեվարած եւ ստրկության վաճառելու տանող քրդերի դեմ եւ ազատում բոլորին: Իհարկե, հենց Աբովյանի բաղձանքն էր հավատակից քրիստոնյա Ռուսաստանի հովանու ներքո հայոց պետականության վերականգնումն ու Անի մայրաքաղաքի վերաշինումը: Գերությունից ազատված հայերին Անիում բնակվելու եւ հայոց երբեմնի մայրաքաղաքը ծաղկեցնելու հորդորը դրա վկայությունն է: Առանձնապես տպավորիչ է Խլղարաքիլիսայի ճակատամարտի պատկերը: Աղասին մենամարտում է արյունարբու Հասան խանի հետ եւ ծնկի բերում նրան, սակայն վաղուց էր հասկացել, որ հայոց սակավաթիվ ուժերը բավարար չեն հայրենիքը մահմեդական թշնամիներից ազատագրելու համար: Նա ներկայանում է ռուսական բանակի հայազգի գեներալ Վալերիան Մադաթովին եւ պատրաստակամություն հայտնում ռուսների կողմից պարսիկների դեմ կռվելու: «Մենակ մեկ գլուխ ունեմ, էն էլ ռըսին ղուրբան եմ արել, թաք լի մեր աշխարհին անօրենի ձեռիցն ազատվի»,- վճռաբար ասում է Աղասին: Նա իսկապես էլ ընդհանրացնում է բազմաթիվ այն ազնիվ հայորդիներին, ովքեր հերոսաբար կռվել են Հայաստանն ազատագրելու համար: Աղասին նրանցից մեկն է, որ արժանանում է առանձնահատուկ ողբերգական ճակատագրի:

Աբովյանը հզոր ոգեւորությամբ է պատկերել Երեւանի բերդի գրավումը: Իրականանում է արեւելահայության երազանքը. Երեւանի բերդը գրավելուց հետո, երբ խցերից մեկում գտել էր իր հորը, նրա հետ ողջագուրվելու պահին էլ սպանվում է դարանակալ պարսիկների ձեռքով: Աղասու եւ ժողովրդի սերը փոխադարձ էր: Նրա մահը վերածվում է համաժողովրդական սգի: Առաջին անգամ հայ իրականության մեջ հերոսին հողին էին հանձնում «մուզիկով ու ղոնշունով»:

Անշուշտ, հեղինակը, որոշակի գեղագիտական ծրագրով երկի դիպաշարը կառուցելիս, գործողությունների նպատակադրված զարգացումը կարող է ցուցադրել կամ բնական, կամ ցանկացած նպատակահարմար հաջորդականությամբ: Սակայն «Վերքի» առաջին գլխում ներկայացվող գործողություններից՝ Թագուհուն առեւանգելու եկած ֆառաշներին պատուհասելուց հետո Աղասին իր հինգ ընկերների հետ հեռանում է Քանաքեռից դեպի Ապարան, Լոռի ու Փամբակ, Շիրակ եւ Անի: Բայց հետո, թվում է, ընդհատվում է կապը, եւ ամբողջ երկրորդ գլխում այդ մասին գրեթե չի խոսվում:

Շարունակությունը՝ էջ 7

ԴԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԴԵՄՔԸ

Սկիզբը՝ էջ 4

Թող որ քո դեմքը գեղեցիկ լինի, թեկուզ եւ գեղեցիկ չէ՝ ըստ աշխարհիկ չափանիշների: Երբ նայում ես սրբապատկերներին, տեսնում ես, որ սրբերը գեղեցիկ չեն այնպես, ինչպես մենք ենք հասկանում գեղեցկությունն այսօր, այսինքն՝ հարմար չէին լինի ամսագրերի կազմերին հայտնվելու համար, ֆոտոլրագրողները չէին գնա՝ նրանց լուսանկարելու, քանի որ չունեն փայլփլուն, անթերի դեմքեր, ինչպես այսօրվա գեղեցկուհիները, որ հիացնում են մարդկանց իրենց տեսքով... ինչպե՞ս. մարմնապես եւ կռապաշտորեն:

Սրբերը հիացնում էին մարդկանց, սակայն իրենց հոգու գեղեցկությամբ, որը նաեւ մարմնի վրա էր արտահայտվում: Աստվածամայրը գեղեցիկ չէ՞ր միթե, որի մասին այն ժամանակվա աղբյուրներն ասում են, որ իրոք հիացմունք, ակնածանք էր առաջացնում մարդկանց մեջ, փոխանցում էր Սուրբ Հոգու շնորհը մարդկանց, եւ մարդիկ հասկանում էին՝ ինչ է նշանակում գեղեցիկ մարդ: Եվ սակայն Տիրամոր գլուխը ծածկված էր, ծածկված էր նրա ողջ մարմինը, իր վրա ուշադրություն չէր գրավում, եւ սակայն... գրավում էր: Աստվածային գեղեցկություն ունեցող, խոնարհ, մաքուր, անեղծ մարդն ուշադրություն է գրավում, ինչքան էլ որ չուզենա: Իր վրա է կենտրոնացնում մարդկանց ուշադրությունը, ինչքան էլ որ ձգտում է թաքնվել մարդկանցից: Նրա խոնարհությունը, հոգու գեղեցկությունը դուրս է թափվում ու տարածվում շուրջը: Մեր Տիրամայրն այդպիսին էր, այդպիսին է եւ յուրաքանչյուր սուրբ: Խոնարհը, սիրելինե՛րս, ամենագեղեցիկն է աշխարհում, ինչպիսին էլ որ լինի նրա արտաքինը:

Քեզ մի օրինակ բերեմ: Սուրբ Պատարագից հետո, երբ դուրս ենք գալիս եկեղեցուց, բարեւում իրար, քեֆն ու հալը հարցնում, եւ եթե իսկապես ապրել ենք սուրբ Պատարագը. աղոթել, հաղորդվել, բարձրացել երկինք, դիպել Քրիստոսին, այդ ժամանակ բոլոր մարդիկ քեզ գեղեցիկ չե՞ն թվում: Չես ասում. «Սա տգեղ է, նա տգեղ է», այդպես չես դատում մարդկանց, բոլորը քեզ թվում են գեղեցիկ, սիրելի, դուրեկան: Սուրբ Պատարագը մեզ գեղեցիկի աշխարհ է տանում, որն Աստծու աշխարհն է: Ուր որ Աստված է, այնտեղ գեղեցկությունն է, ուր որ Աստված է, այնտեղ խոնարհությունն է, պարզությունը, շնորհն ու գրավչությունը: Մեզ գրավում է Աստծու գեղեցկությունը, եւ մեզ գրավում են այն մարդիկ, որ Աստծու շնորհն ունեն:

Զգույշ եղիր, որ չկորցնես այդ շնորհը:

Եթե անմեղ երիտասարդ ես ու գեղեցիկ այդ անմեղությամբ, զգուշացիր, որ չկորցնես հոգուդ ու դեմքիդ այդ գեղեցկությունը: Գեղեցիկ ես, եթե երիտասարդ ես, եւ ավելի գեղեցիկ, երբ որ չես շպարվում: Երբ չես շպարվում, այնպիսին ես, ինչպիսին քեզ ստեղծել է Աստված: Եվ եթե առավոտյան արթնանալով՝ աղոթում ես ու առանց շպարվելու գնում աշխատանքի, դպրոց եւ այլն, մի այլ տեսակի գեղեցկություն ունես՝ քո գեղեցկությունը, քո միակ ու անկրկնելի դեմքը, որի նմանը չկա ամբողջ աշխարհում: Այնինչ շպարված, հարդարված դեմքը քեզ նույնացնում է բազմաթիվ այլ աղջիկների, կանանց հետ:

Ահա այդ բանը տեսա ես այս շաբաթ երեկոյան մետրոյում. բոլորը նույնն էին, բոլորի ոճը նույնն էր: Այդ «էմո»-ի ոճի մազերից, որի մասին ասացի քեզ, ունեին շատ երեխաներ: Ուրեմն այլեւս անհատականություն չունես դու: Այսօր ուզում եմ քեզ ասել հետեւյալը. սովորի՛ր լինել գեղեցիկ քո ձեւով: Ինչպե՞ս ենք ասում՝ սա սուրբ Գեւորգն է՝ իրեն հատուկ սրբությամբ ու գեղեցկությամբ, սա սրբուհի Մարինան է, սա՝ սրբուհի Ֆոտինին՝ իր առանձնահատուկ գծերով: Սա իսկական գեղեցկություն է, եւ ոչ նմանակման, վատ ընդօրինակման, երբ մեկը մյուսին նայելով՝ վերցնում է նրա ոճը, կեցվածքը եւ այլն:

Ձեռք բեր քո՛ գեղեցկությունը: Շատ գեղեցիկ ես դու: Եվ նորից եմ ուզում քեզ ասել այսօր. գտի՛ր քո հոգու գեղեցկությունը, բացահայտիր այն: Եվ գիտե՞ս՝ ինչպես է այն բացահայտվում. երբ կանգնում ես Քրիստոսի առջեւ ու թույլ տալիս, որ Նա նայի քեզ, եւ Նրա դեմքի ճառագայթներն ու գեղեցկությունն արտացոլվեն քո դեմքի վրա: Եվ այդ արտացոլքը երեւում է:

Շարունակությունը՝ էջ 7

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

Իր բացառիկ տաղանդի եւ օժտվածության շնորհիվ Մկրտիչ Պեշիկթաշլյանը պատկառելի ներդրում է ունեցել արեւմտահայ գրականամշակութային կյանքի զարգացման գործում: Լինելով առաջադեմ մտավորական՝ նա մեծ կարեւորություն է տվել թատրոնին՝ այն համարելով հասարակական կյանքի զարգացումն ապահովող կարեւոր օղակ:

Մ. Պեշիկթաշլյանը 1856 թվականին կազմակերպեց արեւմտահայ թատրոնի հիմնադրումը՝ նոր փուլ բացելով հայոց թատրոնի պատմության մեջ: Այդ ասպարեզում նա եւ բեմադրվող պիեսների հեղինակ էր, եւ թարգմանիչ, եւ դերասան: «...Ուրիշ տեղ մը զայն կտեսնենք բեմին վրա, իր սեփական ճիգերովն ու ձեռքերովը կանգնված բեմին: Առավոտը թատերգություններ կը գրե եւ երեկոյին ինք անձամբ կը խաղա զանոնք՝ իր հավաքած խումբին հետ»,- այսպես է պատմում Դանիել Վարուժանը դրամատուրգի՝ թատերական գործում ներգրավվածության մասին:

Պեշիկթաշլյանի պիեսները հայ դրամատուրգիայի արժեքավոր երկերից են: Նա իր գրական գործունեության երկրորդ շրջանում (1850-1860- ականներ) մեկը մյուսի հետեւից գրում է «Կոռնակ», «Արշակ», «Վահան», «Վահե» դրամաները: Թատերագիրն անդրադառնում է հայ ժողովրդի պատմական անցյալին՝ հստակ գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ ազգային ինքնագիտակցություն արթնացնելու համար գրականությունը կարող է լավագույն ուղին հարթել, իսկ թատրոնը՝ նպաստել դրա տարածմանը: Հանդիսատեսի ուշադրությունը գրավելու համար նա իր ողբերգությունների նյութը վերցնում է պատմական անցյալից, երբ երկպառակությունն ու մատնությունն էին վճռում հայոց տխուր վիճակը:

Պեշիկթաշլյանի դրամաների առանձնահատկություններից է այն, որ դրանք գրված են աշխարհաբարով: Եթե պատմական ողբերգությունների լեզուն գրաբարն էր, ինչն ապահովում էր այդ ժանրի համար անհրաժեշտ վսեմ ոճը, ապա աշխարհաբարը քանդեց այն պատնեշը, որ կար ընթերցողի եւ ստեղծագործության, հանդիսականի ու թատրոնի միջեւ:

Նրա դրամատուրգիայում տիրապետող է պատմական թեմատիկան: Դրամատուրգն անդրադարձել է 4-րդ դարի դեպքերին՝ ստեղծագործաբար մոտենալով պատմական նյութին: Հեղինակը չի մնում պատմության քարացած անունների եւ դեպքերի կաղապարված շրջանակում: Իսկ պատմական նյութի վերաբերյալ նման մոտեցումը հատուկ է ռոմանտիզմի գեղագիտությանը:

«Կոռնակ» դրաման գրվել է ստեղծագործական բռնկման շրջանում՝ չորս օրվա ընթացքում: Այս դրամայի գրությունն ու բեմադրությունը շրջադարձային եղան հայ գրականության եւ թատրոնի համար: Տպավորիչ երկխոսությունները բացահայտում են հերոսների հուզաշխարհը: Դրամայում հեղինակի գաղափարական հերոսը Ներսեսն է, ով անձնազոհ հայրենասերի տիպական կերպար է: Մանավազյան Ներսես իշխանի հակապատկերն է Կոռնակը: Այս երկու հակադիր հերոսների փոխադարձ թշնամանքից բխող պայքարը դառնում է գործողությունների եւ բախման զարգացման հիմնական շարժիչ ուժը:

Կոռնակի եւ Զավենի տեւական զրույցներում բացահայտվում է դժբախտ հոր ներքին դրաման. «Գիտես, որ գահասիրության փափագով վառված՝ մերժեր է հայրս աթոռեն, որ սրտին ցավեն աչվները կուրցած՝ Ներսեսին քով ապավիներ էր. ես խնդրեցի Նեսեսեն, որ չընդունի զինքը, անիկա, գիտես, որ մտիկ չըրավ, ու ակնե բռնկեցան մեր թշնամությունները, ու մեկ հատիկ սիրական զավակս պատերազմի սուրը հնձեց ծաղիկ հասակին մեջ» *(Մկրտիչ Պեշիկթաշլյան, Երկերի լիակատար ժողովածու, եր., 1987, էջ 155)*: Դրամատուրգը պատմական իրողություններին տվել է արդիական լուծումներ: Կոռնակի համար հայրենիքն ունի առաջնային նշանակություն, սակայն նա առաջնորդվում է զգացմունքներով՝ անտեսելով բանականության կարեւորությունը:

Եթե կլասիցիստական ստեղծագործության մեջ բանականության սկզբունքներին հետեւելը գեղագիտական հիմնադրույթ էր, ապա, անշուշտ, վերոնշյալը ռոմանտիզմի դրսեւորում է, երբ զգացմունքները դառնում են գերիշխող:

Թվում է՝ Կոռնակի գործողությունները միանգամայն արդարացված են. նրա հոգին կրծում է որդեկորույս հոր վրեժը, որը դառնում է ամեն վատ արարքի պատճառաբանությունը: Զավենի հետ զրույցում նա կարծես զղջում է Կամսարական տոհմը բնաջինջ անելու եւ իր եղբորորդի Վասակին սպանելու համար: Սակայն նրա չարագործությունները դրանով չեն սահմանափակվում: Երբ նրա հայրը՝ Տրդատը, փորձում է դարձի բերել իր մոլորյալ զավակին՝ խրատելով անդունդից հեռու պահել յուր ազգը, Կոռնակը դառնում է հայրասպան:

Կոռնակի կերպարի ստեղծումն արեւմտահայ հասարակական-քաղաքական կյանքի պահանջն էր: Նրա նախատիպն ազգային վերածնության ու զարթոնքի համար ստեղծված «Համազգայաց» ընկերության քաղաքական հակառակորդ Անտոն Հասունյանն էր՝ տխրահռչակ հայոց կաթոլիկ պատրիարքը: Դրամայի բեմադրության ժամանակ Մ. Պեշիկթաշլյանը մարմնավորում էր Ներսեսին: Բեմի վրա հեղինակը փոխել է դրամայի՝ «Բայց հիմա ալ կ՚ըսեմ քեզի, վախցիր, սոսկացիր, Կոռնակ. դուն, որ չարության մեջ քարացեր, պնդացեր ես, ու նենգությամբ խարդախ հնարքներով եւ անհաշտ ատելությամբ իրավանց եւ արդարության դեմ ու կը պատերազմիս, ու ժպիրի ձեռքովդ թույն կսերմանես ազգիդ մեջ, մի՛ պարծիր անարգ հաղթանակովդ» *(Ա. Չոպանյան, Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքը եւ գործը, Փարիզ, 1907, էջ 202)* հատվածը՝ ասելով. «Դուն, որ չարության մեջ հասունցեր ես...»:

Կոռնակի խարդախությունները հանգուցալուծում են դրաման, երբ նա հաշտության խնջույքի ժամանակ թույն է լցնում Ներսեսի եւ նրա որդիների բաժակների մեջ: Ներսեսի երկու որդիները՝ Հեզիկն ու Ցոլակը, մահանում են, իսկ Ներսեսի բաժակը Կոռնակին է բաժին հասնում:

«Արշակ» դրաման 4-րդ դարի հայոց պատմության դեպքերի արձագանքն է:

Շարունակությունը՝ էջ 8

Ստալինյան բռնաճնշումները եւ հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը

Սկիզբը՝ էջ 4

Բայց այս ամենն ավելի ուշ՝ անհատի պաշտամունքը հաղթահարելուց հետո: Դժվարը հենց նույն դժոխքի մեջ դժոխքի մասին գրելն էր: Եվ, այո՛, ստալինյան հալածանքների բովում եւս գրվեցին գործեր, որոնց հեղինակները գիտեին, որ զոհ են գնալու արյունոտ նախճիրին:

Նրանցից էր իրո՛ք հերոսական այնպիսի մի հանճար, որպիսին Եղիշե Չարենցն էր:

Ահա իր գրական ու հոգեւոր բարեկամի՝ Ակսել Բակունցի ծանր փորձության օրերին, երբ Չարենցը դեռ ձերբակալված չէր, բայց եւ հայտարարում էր՝ որտեղ իր ընկերները, այնտեղ էլ՝ ինքը, գրեց իր լավագույն բանաստեղծություններից մեկը, որ մահվան դարանակալ կարմիր աչքերին նայող իրենց թանկ ընկերության սրբազան աղոթքն ասես լինի: Սրանով Չարենցն իր վճռական ո՛չն ասաց իրեն ու Բակունցին իրար դեմ հանող ամեն տեսակի մեծ ու փոքր չեկիստների սադրանքներին:

Ահա այդ գլուխգործոցը՝ գրված 1936 թվականի հոկտեմբերի 14-ի գիշերը.

Ա. Բ.-ին

...Եվ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերն հնադարյան,-
Եվ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երկերի մաքուր սկիհներում պահված՝
Խորհուրդների համար մշտահմա,
Որպես խորհուրդը մեր նայիրական ոգու,-
Քո «Միրհավի» համար - եւ լուսեղեն՝
Արփենիկի հուշով սրբագործված հավետ,
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
Որ բուրելու է հա՛ր անմյութեղեն,-
Եվ վերջապես քո վեհ, հերոսական
«Սերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ
Սեւ ցելերի վրա մեր գոյության այս սեւ,
Շաղում է շողք ու սերմ անանձնական,-
Այս ամենի համար,- եւ «Ծիրանի»
Հազարամյա փողի համար քո այն,
Որ դարերո՛վ տենչած խաղաղության
Երգն է հնչում,- եւ մեր ժողովուրդը քանի
Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո՝
Հնչելու է երգեր եղբայրական,-
Այս ամենի համար, օ՜, խեղճ իմ բարեկամ,
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...
Այս ամենի համար,- եւ քո եղերական
Տառապանքի համար, որ արդ կրկին
Վեհություն է խառնում քո անաղարտ երգին -
Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական...
Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,-
Երբ դեռ դու այր էիր մի անարատ,
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

(5, էջ 164-165)

Չարենցը 1937-ի զոհերից է, ում հանդեպ հալածանքներն սկսվեցին 1933-ին՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի արգելանքով: Դրան հաջորդեցին հարցաքննություններ, այնուհետեւ նրան վտարեցին Գրողների միությունից, հեռացրին զբաղեցրած պաշտոնից, մեկուսացրին գրական կյանքից, դադարեցրին գրքերի տպագրությունը, այդ թվում՝ Մոսկվայում եւ Թիֆլիսում ռուսերեն թարգմանական ժողովածուները, հռչակեցին քաղաքականապես անվստահելի անձ, հսկողության պայմաններում հրամայեցին քաղաքից չբացակայել, մամուլում քննադատեցին թե՛ իրեն եւ թե՛ իր գրական խմբի անդամներին ու համակիրներին, թունավորեցին կենցաղը, մղեցին ծայրահեղ արարքների, ի վերջո, ձերբակալեցին, բանտում հարցաքննության փոխարեն դաժան հաշվեհարդար տեսան նրա հանդեպ, ուր եւ 1937 թ. նոյեմբերի 27-ին ավանդեց հոգին:

Այս ամենով հանդերձ՝ Չարենցի կյանքի վերջին տարիներն արտակարգ հարուստ են տարատեսակ ստեղծագործություններով, այդ թվում իրեն՝ Ստալինին եւ ստալինյան վարչակարգը քննադատող բազմաթիվ գեղարվեստական էջերով ու տարատեսակ գրություններով: Այս տեսակետից առանձնացնենք «Որպես գորշ, դեղին տերեւներ...», «Կար մի պոետ միամիտ» տողերով սկսվող պոեմները, մահ ու մայրամուտ գուժող երգերը, իր ժամանակի քաղաքական գործիչների գրական դիմանկարները, մինչեւ կալանավորվելը, այնուհետեւ բանտում գրած բազմաթիվ էպիգրամներ ու բանաստեղծություններ, այդ թվում՝ «Օ՜, մանկիկներ մեր լույս», «Հոտ է գալիս կրկին արյան», «Կեսօր», «Բարձրավիզ կոշիկներ հագին», «Թիֆլիսցի կինտոն», «Միջնադարյան կացին», հիշատակենք «Դոֆինը նայիրական» սոնետների շարքը՝ ի հիշատակ Թիֆլիսում Բերիայի կողմից ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանության: Կան նաեւ բազմաթիվ այլ գործեր: Դրանցում Ստալինը ներկայանում է որպես ռուս ցարերի գահը զավթած թիֆլիսցի մի նեղճակատ կինտո, որպես մարդկանց գլխատող միջնադարյան կարմիր կացին, որպես հատակի տակից պոետին լրտեսող, բեղերը սրած մի տարական, որպես մարդկային արյունով ճաշ եփող խոհարար, որպես 150 միլիոնանոց երկիրը՝ ԽՍՀՄ-ը, մի արջի նման պարեցնող կրկեսի ծաղրածու, որպես խրոմե սապոգներով ժողովրդին տրորող բռնապետ, որպես մարդկային գանգերով հաղթանակի բուրգ՝ ջաբուլգա կառուցած մի դահիճ, որպես ժամանակին բանաստեղծական փորձեր արած մի նոր Ներոն կամ Նեռ՝ հակաքրիստոս, որպես Մարքսի հետ ոտք մեկնող մի քաղաքական ելուզակ, որպես մեր մտքի որձակը լափող հրեշ... Ահա բանտում 1937-ին գրած «Թիֆլիսցի կինտոն» բանաստեղծության վերջին տները.

Սեւ կառքի կառապան լկտի,
Բազմել է ցարերի գահին,
Լափում է որձակը մեր մտքի,
Զրկում է մեզ հունտից ազգային:

Ինչ անի նստվածքը ռամիկ
Կավատի դավից անտեղյակ,
Արեւ էր, դառել է մահիկ,
Աշխարհում մնացել մենակ:

Օ, ո՞ւր եք, աստղեր, արեւներ,
Իջնում է ազգիս երեկոն,
Եվ եղավ չլսված մի Նեռ
Թիֆլիսցի նեղճակատ կինտոն:

Հ. Գ.

Այս ամենի մասին մենք այսօր պարտավոր ենք հիշել, գրել եւ հիշեցնել, որովհետեւ Ստալինը... վերադառնում է: ՌԴ-ում այսօր քննադատական ալիքն ավելի ուղղում են Խրուշչովի դեմ, որ համարձակորեն հաղթահարեց անհատի պաշտամունքը, նորից սառեցնում են նրա «ձնհալը» եւ մեծարում Ստալինին:

Անգամ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Սոլժենիցինի անունն են մղում ետնախորք, որովհետեւ նրա «ԳՈՒԼԱԳ արխիպելագ» բազմահատոր վեպը ստալինյան բռնաճնշումների հայելի-հանրագիտարանն է: Ըստ այսօրվա մեկնաբանների՝ այդ վեպն ստվեր է նետում Ռուսաստանի հեղինակության վրա, ուստի պետք չէ, որ տեղ գտնի անգամ դպրոցական ծրագրերում:

Այսօր Ռուսաստանում վերականգնվող կետրոնաճիգ իմպերիալ ոգու համար Ստալինն ավելին է, քան միլիոնավոր մարդկանց կյանքը: Եվ դա հիմնավորում են նրանով, որ Ստալինը հաղթեց պատերազմում, ԽՍՀՄ-ի վերահսկողության սահմանները Չինաստանից հասցրեց մինչեւ Բեռլին, երկրին տվեց ատոմային զենք, զարգացրեց արդյունաբերությունը, Երկրորդ համաշխարհայինից հետո կնքեց այնպիսի նպաստավոր դաշնագիր, որ հետագա տասնամյակներին ապահովեց ԽՍՀՄ առաջատար դերն աշխարհում:

Մոռանում են, որ ստալինյան հալածանքներին զոհ գնացին տասնյակ միլիոնավոր մարդիկ, եւ գիտակցաբար այդ թիվն աստիճանաբար նվազեցնում են, որ արդյունաբերականացման հետ մեկտեղ ոչնչացվեցին գյուղական տնտեսությունները, ամայացան տասնյակ հազարավոր գյուղեր, եւ դեռ առ այսօր գյուղը ոտքի չի կանգնում, այդ իսկ պատճառով վիթխարի երկիրը չի կարողանում ինքն իրեն կերակրել:

Շարունակությունը՝ էջ 8

ԴԱՐՁԻՐ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԴԵՄՔԸ

Սկիզբը՝ էջ 5

Հասկանո՞ւմ ես. ամենագեղեցիկ հայելին, որի մեջ կարող ես նայել ու հարդարվել, Քրիստոսի դեմքն է: Այնտեղ տեսնում ենք մեր նախատիպը, մեր նպատակակետը, տեսնում ենք, որ մենք էլ կարող ենք լինել այնքան գեղեցիկ, ինչքան Քրիստոսն է: «Տեր, գեղեցկացրու իմ դեմքի տգեղությունը, ինչպես Դու ես գեղեցիկ»,- ասվում է Ավագ շաբաթ երգվող շարականներից մեկում:

Մկրտվելիս Աստծուց շնորհ ենք ստացել, բայց տրվելով աշխարհի չարություններին, նենգություններին՝ փոխվել ենք, կարծրացել: Տեսել եմ, սակայն, մեծահասակների, որ երեխաների նման են, տեսել եմ ծերունի հրաշագեղ դեմքեր: Մի տատիկի եմ ճանաչում, որի աչքերը փայլում են, լույս արձակում լուսամփոփի պես, անկեղծ եմ ձեզ ասում: Երբեք շպարը չի դիպել նրա դեմքին, այնպիսին է, ինչպիսին մայրն է նրան ծնել: Գեղեցիկ է նրա դեմքը, որովհետեւ աղոթում է, հաղորդվում, Քրիստոսին իր մեջ առնում: Գեղեցիկ է նրա դեմքը, որովհետեւ սիրում է, որովհետեւ իր կյանքում շատ է պայքարել, իսկ պայքարողի դեմքը չքնաղ է:

Կգեղեցկանա դեմքդ, երբ սովորես լաց լինել, երբ որ լաց լինես: Իհարկե, ոչ եսասիրաբար, բարկությունից ու նյարդային գրգռված վիճակից, քանի որ ամեն ինչ չի եղել այնպես, ինչպես դու էիր ուզում. այդժամ տգեղանում ես, այդժամ լաց մի՛ լինիր, չի սազում դեմքիդ: Սակայն երբ լաց ես լինում սիրուց, ցավից, զղջման զգացումից, այլ մարդկանց ցավը զգալով, հուզվելով նրանց երջանկությունից կամ վշտից, եւ հատկապես, երբ լաց ես լինում Քրիստոսի հանդեպ երախտագիտության զգացումից՝ փառաբանելով Տիրոջն այն բոլոր նվերների համար, որ արել է քեզ, այդժամ ինչքա՜ն գեղեցիկ ես լինում: Սա վերաբերում է ոչ միայն կանանց, այլեւ տղամարդկանց, որովհետեւ տղամարդիկ էլ են ուզում գեղեցիկ լինել: Բոլորս ենք ուզում գեղեցիկ լինել եւ ամեն ինչում գեղեցիկին ենք ձգտում. ուզում ենք, որ մեր տունը գեղեցիկ լինի, եկեղեցիները՝ հարդարված. «Սրբացրու, Տեր, Քո տան վայելչությունը սիրողներին» (մեջբերումը՝ Պատարագից): Վայելուչ եղիր, գեղեցիկ վարվելակերպ ունեցիր, որպեսզի գեղեցիկ լինես, որովհետեւ այդպիսին է մեզ ստեղծել Աստված:

Արդ՝ եթե աչքերդ արտահայտեն այն ապրումները, որ տեսել եմ իմ ծանոթ այն տատիկի հայացքում, դու էլ գեղեցիկ դեմք կունենաս: Տեսե՞լ ես՝ ինչքան գեղեցիկ է մարդու դեմքը հսկումից հետո: Հոգնած է, աչքերը մրմռում են, բայց գեղեցիկ է, որովհետեւ գիշերը ժամեր շարունակ աչք չի փակել Քրիստոսի համար: Մինչդեռ երբ տեսնում ես մեկին, որ դուրս է գալիս գիշերային որեւէ ժամանցավայրից՝ ակումբից, սրճարանից, դիսկոտեկից, պանդոկից, բարից, մարզադաշտից, ոստիկանական բաժանմունքից եւ այլ վայրերից, ուր մեղք է գործել, ինչպիսի՞ն է նրա դեմքը, գեղեցի՞կ է միթե, ունի՞ այն գեղեցկությունը, որ Աստված է մեզ պարգեւում: Անշուշտ, չունի:

Սիրում եմ սուրբ Պատարագի ժամանակ երբեմն-երբեմն թաքուն նայել աղոթող մարդկանց, քահանաներին, որպեսզի ես էլ վերցնեմ նրանց դեմքի գեղեցկությունից, եւ իսկապես, բոլոր դեմքերն ինձ շատ գեղեցիկ են թվում: Մի անգամ մի մարդու տեսա, որ աղոթում էր եւ աղոթքը վերջացնելով՝ դուրս եկավ եկեղեցուց ու սկսեց զրուցել մարդկանց հետ: Ես հետեւում էի նրան ոչ այլ պատճառով, քան այն, որ տեսնեմ, թե ինչպիսին է դարձնում Աստված այն մարդուն, ով աղոթում է: Եվ գիտե՞ք՝ ինչպիսին. այսքան ժամանակ դրա մասին եմ խոսում՝ գեղեցիկ:

Մեր հոգու եւ դեմքի գեղեցկությունը շատ է ազդվում նաեւ մեր ընկերական շրջապատից: Եթե շփվում ես գեղեցիկ մարդկանց, քրիստոնյաների հետ, որ ունեն գեղեցիկ բնավորություններ, այդ գեղեցկությունը քո հոգուն էլ է փոխանցվում, դու էլ ինչ-որ բան վերցնում ես նրանց գեղեցկությունից, եւ նրանց շնորհն արտացոլվում է քո դեմքի վրա: Անկարեւոր մի՛ համարիր այս փաստը. ում հետ ընկերություն ես անում, ազդվում ես նրանից:

Հիմա խոսում եմ քեզ հետ, որ երիտասարդ ես: Հիշո՞ւմ ես. երբ երեխա էիր, արեւն էր շողում մեջդ, այնքա՜ն գեղեցիկ դեմք ունեիր: Նկատի չունեմ, որ հիմա չունես, հիմա էլ ունես գեղեցիկ, հարդարված դեմք: Այլ գեղեցկության մասին եմ խոսում, նկատի ունեմ, որ աչքերդ այնքա՜ն անմեղ էին, անմեղ էր սիրտդ, հաճույք էր պատճառում քեզ նայելը: Անցան տարիներ, ու կարծրացար, խստացար, սրվեցին հայացքդ ու



կեցվածքդ: Հաճախ նյարդայնանում ես, բարկանում, խփում դռները, հարվածում սեղաններին, տանը բոլորին իրար խառնում, ատում այս կամ այն մարդուն, զանազան անկարգություններ անում, կռվում այն մարդկանց հետ, ում սիրել ես մի ժամանակ, երբեմն կռիվների մասնակից ես դառնում մարզադաշտերում եւ այլն, եւ այլն: Այս ամենը տգեղացրել են քեզ: Գեղեցկությունը գոյություն ունի, բայց տակն է մնացել: Ուզում եմ քեզ հետ այդ ծածկված գեղեցկության մասին խոսել:

Շարունակելի

Թարգմանությունը հունարենից՝
Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

Սկիզբը՝ էջ 5

Վեպի այս մասում Երեւանի բերդի ու նրա սարսափների նկարագրությունն է եւ տեղաբնիկ մահմեդականների Միառլամի սգի պատկերումը, որն ուղեկցվում է հեղինակի պատմափիլիսոփայական խորհրդածություններով եւ այսօր ունի ինչպես գեղարվեստական, այնպես էլ ազգագրական ու պատմաճանաչողական բացառիկ արժեք:

Վիպական կառույցի իմաստով՝ սա կարծես Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում «Փակագծի մեջ» գլխի նախօրինակն է՝ առասպելական Հայկ նահապետի ու նրա հաջորդների, Երվանդունիների, Արտաշիսյանների, Արշակունիների, Բագրատունիների ու Ռուբինյանների եւ թագավորական ու իշխանական մյուս տոհմերի իրական երեւելի դյուցազունների սխրանքների հիշեցումով: Այսպիսով նա կատարում է համայն հայության մեծ ուսուցչի իր պատմական առաքելությունը՝ հայ եւ օտար ընթերցողին հնագույն ժամանակներից ի վեր մեր ազգային ինքնության, մեր երեւելի նախնիների քաջության եւ առաքինության լավագույն օրինակների ցուցադրումով, խոսույթի՝ պատմական անցյալի առասպելական եւ նոր ժամանակների մարդկային հարաբերությունների, կրոնական ըմբռնումների եւ ծիսական արարողակարգերի մասին ազգագրական հարուստ տեղեկատվությամբ: Արժե հիշել վեպից թեկուզ մի փոքրիկ հատված, որը կարող է պատկերացում տալ, թե ինչպես էր Աբովյանը ոչ իբրեւ պատմաբան, այլ որպես գեղագետ-գրող գեղարվեստականացնում հայոց եւ համաշխարհային միավորյալ պատմությունը եւ ինչպես էր այն ներկայացնում հայ նոր սերունդներին. «Էն սուրբ հողը, ուր անպարտելին Հայկ, անաստված Բելա չար մտքին չհավանելով, իր ընտանիքը, իր քաջ, պատվական զորքը հավաքեց, էկավ ու Հայաստանի զարմանալի սարերի ու սիրուն դաշտերի տեսույն մայիլ մնացած, Զանգվի դրախտանման ձորը, Զանգվի փրփրադեզ անմահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասսա ու Ալագյազի երկնանման գլուխը, Սեւանա ծաղկափթիթ ձորերն ու սարերը տեսնելով՝ իր մզրախը ցցեց ու իր սուրբ անունով Հայաստան կանչեց ու Բելա անհոգի մարմինը իր նետ ու աղեղին մատաղ արեց: Էն սուրբ տեղը, ուր Շամիրամ՝ աշխարհ տիրելով, ո՛չինչ տեղ էն պատկերը չճարեց, որը որ իր սիրտն ուզում էր ու մեր հրեշտականման Արայի սիրուն երեսին կարոտ, զորք ժողովեց ու էկավ, որ թե նրա սուրբ սիրտը լալով, սիրով չգրավի, զոռով նրան գերի անի, որ բալքի նրա սուրբ շունչը իր երեսին դիպչի, ու մեռած ժամանակ էլ նրա մարմինը իր առաջին դրած՝ գիշեր-ցերեկ սուգ էր անում, որ կամ նա կենդանանա, կամ ինքը նրա ոտքերի տակին իր հոգին տա: Էն աշխարհը, ուր որ Զարմայր՝ Աքիլլեսի հետ Հեկտորի դեհն ուզեցավ պահի, Պարույր, Արբակի հետ Սարդանաբաղին էրեց, Տիգրան՝ Կյուրոսի հետ Աժդահակի հոգին առավ, Վահե Դարեհ Կոդոմանի հետ Ալեքսանդրի ճամփեն ուզեցավ բռնի, Վաղարշակ Պարթեւ՝ իր եղբայր Արշակա ոտը կտրեց ու Հայաստան կարգ տվեց, նախարարներ հաստատեց, Տիգրան՝ արքա արքայից, Ասորաց աշխարհն իր ձեռքի տակը բերեց ու կարթագինացոց Աննիբալ, իր մոտ հրավիրեց...»: Սա շեղում է, որ առաջին հայացքից կարող է վիպական հիմնական գործողությունը թուլացնող երկարաբանություն թվալ, սակայն Աբովյանը, այսպիսով ընթերցողին հաղորդելով կարեւոր գիտելիք, վարպետորեն, սահուն անցնում է ժամանակների վրայով, Խլղարաքիլիսայի ճակատամարտի, Աղասու եւ Հասան խանի մենամարտի պատկերավոր նկարագրությամբ աննկատելի վերականգնում է կապը ներկայի հետ, գեղարվեստական պատկերում սերունդների համար ստեղծում պատմական անցյալի եւ ներկայի հետաքրքիր միասնություն, եւ գործողությունները շարունակվում են վեպի երրորդ գլխում: Ուրեմն՝ իզուր է ոմանց թվացել, թե վիպական գործողության խզում կա, եւ առաջին գլխի գործողությունները շարունակվում են երրորդ գլխում:

Երկրորդ գլխի էական մասերից է եւ այն հատվածը, ուր Էջմիածնի հոգեւորականները, որ առանց այն էլ շատ էին տուժում մահմեդականների տեղի-անտեղի այցելություններից, շաբաթներով նրանց շքեղ կերուխումով հյուրասիրություններից, հանդիսավորությամբ գալիս են մահմեդականների՝ Հասան-Հուսեյինի սուգը մեղմելու եւ իրենց ընծաներով նրանց պատվելու:

Աբովյանը, իհարկե, տարատեսակ հոգեւորականների է հանդես բերել վեպում: Ոմանց նա արժանացրել է խստագույն ծաղրի՝ դատապարտելով նրանց տգիտությունն ու ընչաքաղցությունը: Քանաքեռի անգրագետ տեր Մարկոսը, օրինակ, որ պատիվ՝ համառոտագրություն կարդալ չգիտի եւ «սխ»-ը «սոխ» կամ «սխտոր» է կարդում, իր ձախողման համար մեղադրում է կամ ակնոցին, կամ մոմը լավ չբռնած մոնթին, կամ անտեղի բարկանում տիրացուի վրա: Բայց նա, որսկան շան նման հոտոտելով, գտնում ու կանգնում է մեռելաթաղի կերակուրների գլխին՝ անամոթ պահանջներով, խմիչք եւ ուտելիք է ուզում եւ մեռելը դեռ գերեզման չիջեցրած՝ կողոպուտը՝ հանգուցյալի հագուստներն է ուզում: Սրանց ու նմանների առիթով է Աբովյանը հիշում «Սար ու ձոր՝ տերտերի փոր» ժողովրդական ընդհանրացնող խոսքը, բայց սրանց կողքին կան եւ ուսյալ հոգեւորականներ՝ իր անօրինակ քաջությամբ տարածաշրջանում հայտնի Գրիգոր Մանուչարյան եպիսկոպոսը եւ լուսամիտ Ներսես Աշտարակեցին:

Տեղին է թուրք մոլլաների ու մեր տերտերների աբովյանական համեմատությունը: Մեր քահանաները չեն զբաղվել մատաղ սերնդի գոնե գրաճանաչության հարցով, իսկ թուրք կամ պարսիկ մոլլաները, առանց փողի՝ իրենց լամուկներին ձրի կարդացնելով, սերունդներ են դաստիարակել՝ իրենց հավատն ու նենգ նկրտումները քարոզելով եւ լեզուներ սովորեցնելով. «Ամեն մեչըդի հայաթում, գեղ տեղերանքն էլ, մեկ մեծ վարժատուն կա, ուրտեղ երկու-երեք լեզու են սովորում. Մեր եկեղեցըքանց բակում ըսկի լագլագն էլ բուն չի դնիլ, բաս ի՞նչ կըլի, որ ազգի սիրտ էլ քիչ-քիչ հովանա» (նույն տեղում, էջ 77):

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

Տեսարան Բերայից

Սկիզբը՝ էջ 6

Այն սկսվում է ազգային կյանքի բարդ եւ աղետալի վիճակի նկարագրությամբ: Նպատ լեռան ստորոտում հայոց արքա Արշակն ու նրա որդի Սիսակը խոսում են պարսիկների առաջխաղացման մասին: Պատմական աղբյուրներից հայտնի է, որ հայոց Արշակ թագավորն ունեցել է մի որդի՝ Պապ անունով, որ թագավորել է հորից հետո: Դրամայի սկզբում Սիսակը թռուցիկ խոսում է իր ավագ եղբոր՝ Պապի մասին, ով Պոլսում պանդխտության մեջ տառապում է:

Միանգամայն ակնհայտ է, որ Սիսակը Պեշիկթաշլյանի երեւակայությամբ ստեղծված հերոս է եւ պատմական նախատիպ չունի:

Հայոց Արշակ արքան ծայրաստիճան հայրենասեր է. նա գերադասում է մեռնել, քան տեսնել, թե ինչպես է Հայաստանն իր սեփական ձեռքերով կործանվում: Այդ օրհասական պահին հայոց հոգեւոր առաջնորդ Ներսեսը կոչ է անում ապավինել Աստծու ողորմածությանը:

Հատկապես տպավորիչ են Շապուհի եւ Արշակի զրույցները, որտեղ հայոց արքան խիզախությամբ ասում է. «Բախտես ու կատաղութենեդ մեծ է իմ արիությունս. անարգ շղթաներով կապած են ձեռքերս, բայց մոռացած չեմ, որ արքունի գավազան կը կրեին ատենով» *(Մ. Պեշիկթաշլյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 208)*: Նույնպիսի ջերմությամբ ու հանդիսավոր կերպով հնչում է Սիսակի խոսքը, երբ Շապուհը նրան բանտարկել է տալիս. «Գեղեցիկ ես, հայրենիքդ իմ, պայծառ ու ծիծաղկոտ է քու արեւդ, որ կը շողա ավերակացդ ու գերեզմաններուդ վրա, մինակ բախտդ տխուր ու սեւ է: Ալ չտեսնամ պիտի Հայաստանին երկինքն ու ցանկալի հողը, հոս երիտասարդ հասակս պիտի թոռմի, վասնզի հայրենյաց արեւուն ճառագայթները չեն ծագիր իմ վրաս» *(նույն տեղում, էջ 217)*: Սիսակը կռվի ժամանակ փրկում է պարսից արքայորդի Որմիզդի կյանքը, եւ, ի նշան բարեկամության, նրանք փոխանակում են իրենց սրերը:

Անհուշ բերդում շղթայակապված Արշակ արքան իրեն է մեղադրում ստեղծված վիճակի համար: Նա հայրենիքի վիշտը դարձնում է անձնական ողբերգության եւ տառապանքի պատճառ: Ձղջումն ու ապաշխարանքը դառնում են ինքնախարազանման պատճառ: Դրամայում Արշակի կերպարն առավելապես զգացմունքային հագեցվածություն ունի:

Որմիզդը Սիսակին ազատում է բանտից, բայց երբ նա հասնում է Անհուշ բերդ, Արշակն արդեն անձնասպան է լինում: Ինքն իրեն չներելու փաստը Արշակին դրդում է ինքնասպանության, ինչն էլ վերջ է դնում հայոց արքայի տանջանքներին: Նա մահանում է սիրասուն որդու գրկում՝ խոր վիշտ պատճառելով նրան: Ներսեսի՝ հայոց ապագայի եւ հայկյան երիտասարդության պանծալի ապագայի սպասումով է ավարտվում դրամա. «Տեր, Արշակին վրա գոհ ըլլա արդարությունդ. քեզմով մխիթարվի զորանա նոր Հայաստանը եւ Հայկյան երիտասարդությունը» *(Մ. Պեշիկթաշլյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 208)*:

«Վահան» դրաման հայրենասիրության եւ մարդկային զգացմունքների նրբին հագեցվածություն ունի:

Վահանը խոսում է հայոց երկրի անանխանձելի վիճակի մասին եւ ավելացնում, որ մեր ժողովրդին միշտ ուղեկցել են մատնիչներն ու դավաճանները. «...ո՛վ դժբախտ Հայաստան, քո ամեն ժողովքներուդ մեջ, ուրեմն, միշտ մատնիչք ու դավաճանք պակաս պիտի չըլլան վսեմ ու մեծամեծ խորհրդոց հակառակելու, սիրո եւ միության կապերը քակելու. վաթսուն հազար հայոց քաջերու սուրերը եթե չի կրցան պարսից լուծը թոթափել տալ, քեզի պես անօրենի մը չարությունը եղավ արգելք, ու նզովելի Վասակ մը մեծին Վարդանա բախտին անիվը կոտրեց... *(նույն տեղում, էջ 233)*: Սակայն այս դրամայում խնդիրը միայն հայրենասիրությունը չէ. Վահան Մամիկոնյանի որդիներից Սուրենը սիրահարվել է պարսկուհի Ասթինեին եւ անձնատուր եղել՝ բնակություն հաստատելով այնտեղ: Դրամայում գործողությունների առաջմղիչ ուժը սերն է, որից էլ բխում է հերոսների զգացմունքայնությունը: Վահանի համար անընդունելի էր, որ իր որդին սիրում էր թշնամի ազգի զավակ Ասթինեին: Նա անզիջում էր այդ հարցում եւ անողոք՝ իր բնութագրումներում. «Արժանի է իմ անմահ ատելությանս այդ կախարդ աղջիկը, որ մոռացնել տվավ քեզի քու ամեն սուրբ պարտքերդ ու ամոթապարտ ճամփու վրա սահեցուց քեզ. ու դուն դեռ զինքը կը հիշես, դեռ սրտիդ մեջ...» *(Մ. Պեշիկթաշլյան, Երկերի լիակատար ժողովածու, էջ 237)*:

Սուրենը հայրենադավ հերոս է, բայց միաժամանակ սիրում է իր հայրենիքն ու հպարտանում դրանով. «Նվաճյալ է Հայաստան, բայց ո՛չ երբեք հաղթված, ազգանվեր մատնիչներու հայրենիք է, բայց ավելի շատ՝ առաքինի ու անպարտելի դյուցազնաց» *(նույն տեղում, էջ 241)*:

Բավական ինքնատիպ սյուժեով առանձնանում է «Վահե» դրաման: Այստեղ պատմական իրադարձություններն ու հերոսների զգացմունքները միասնաբար են հանդես գալիս: Դրամայի գործողությունները զարգանում են հայոց թագավորի դստեր՝ Արուսյակի սիրո շուրջ, թեպետ որպես հերոսուհու՝ նրան դրամայում չենք տեսնում: Նրա բոցավառ սերը հայրենյաց թշվառության եւ դավաճանության պատճառ է դառնում: Հոգեբանական բարդություններն ստեղծվում են անձնական երջանկության եւ քաղաքական բախումների հետեւանքով:

Ազատության եւ ինքնիշխանության վեհ գիտակցումն ընդգծված կերպով արտահայտված է Վահեի կերպարում. «Ազատությունը նախ եւ առաջ մեր անմատույց լեռներուն մեջ ապաստան մը գտավ, եւ հայերը անոր անդրանիկ ծնունդներն են: Վահե չի կրնար մատնիչ ըլլալ յուր ազգին բախտին ու փառացը. ազատության կործանումը տակ կը ճմլի, բայց ճակատը չի խոնարհեցներ հարստահար բռնության դիմաց» *(նույն տեղում, էջ 267)*: Վահեն եւ Արտավազդը դառնում են գաղափարական հակառակորդներ: Եթե առաջինի համար կարեւոր է երկրի քաղաքական վիճակը, ապա Արտավազդի համար ճշմարիտ ու անբիծ սերը վեր է ամեն ինչից: Այս հերոսների բախումից էլ ծնվում է երկուստեք ողբերգություն, որ դառնում է երիտասարդ Արտավազդի եւ Արուսյակի ճակատագրերի կործանման պատճառ:

Արտավազդը, վրեժխնդրության ծարավով տարված, ամեն հնարավորն անում է Վահեին թշնամու ճիրանները գցելու համար: Տպավորիչ են երկու հերոսների զրույցները, որոնցով բացահայտվում են նրանց նկրտումները: Դրամայում անհատի զգացմունքներն ու ապրումները կարեւոր են եւ փոխպայմանավորված:

Դրամայի հերոսներից Զարմայրը՝ Վահեի որդին, առանձնակի ջերմությամբ եւ կարեկցանքով է խոսում Արուսյակի մասին. «...հայրենիք եւ սեր իրարու հետ մենամարտեցան մահացու հարվածներով սրտին մեջ ու արյունլվա ըրին զայն. զոհվեց ինքը սերը եւ անոր հետ մեկտեղ յուր կենաց երջանկությունը հայրենյաց սեղանին վրա ու նետահար թռչնո մը պես ինկավ Սոսյաց անտառին սրբազան ստվերացը մեջ՝ երկու սիրելի անուններ միշտ բերնին մեջ մրմնջելով. Վահե եւ Արտավազդ» *(նույն տեղում, էջ 260)*:

Դրամայի վերջում Վահեն ցավ է ապրում Արուսյակի թշվառ ճակատագրի համար, ով Սոսյաց անտառում մենաստանում անցկացնում է իր կյանքի տխուր օրերը:

Մկրտիչ Պեշիկթաշլյանի պիեսները հայ դրամատուրգիայի առանցքային նշանակություն ունեցող երկերից են: Կերտելով խորապես հայկական միջավայր՝ հեղինակը պատմական դրամատիկ կյանքից ծնունդ առած դեպքերը դարձրեց մտահոգության խնդիր: Իր դրամաներում նա արծարծեց արդիական հնչեղություն ունեցող թեմաներ, որոնք նպատակ էին հետապնդում անհանդուրժողականություն դրսեւորել արատավոր բարքերի ու ազգային կյանքի բնականոն ընթացքը խաթարող երեւույթների դեմ:

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Ստալինյան բռնաճնշումները եւ հայ գրողների մարդկային ու ստեղծագործական ճակատագիրը

Սկիզբը՝ էջ 6

Մոռանում են, որ Հայրենականի հաղթանակն արժեցավ 27 միլիոն մարդկային կյանք, որ ընդամենը պաշտոնական թիվն է, իսկ իրականում մարդկային կորուստների թիվը՝ ավելացրած նաեւ անհայտ կորածներին, գերությունից չվերադարձածներին ու փախածներին, անցնում է 50 միլիոնը:

Այնպես որ զգուշացեք՝ Ստալինը... վերադառնում է, որ նշանակում է՝ չարիքն արթնանում է՝ ընդդեմ ժողովրդավարական այնպիսի նվաճումների, որպիսիք են խոսքի ազատությունը, մարդու իրավունքը եւ ազգերի ինքնորոշումը:

1980-2000-ական թվականներին Ռուսաստանում ստալինյան հալածանքները բացահայտող գրքեր էին ու մեկնաբանություններ, իսկ այսօր դնում են նրա արձանները եւ նրա նկարը դրոշ արած՝ երթի դուրս գալիս:

Ահա երկու վկայություն:

ՌԴ քաղաքական գործիչ, «Նոր շարժում» հոսանքի ղեկավար Սերգեյ Երվանդի Կուրղինյանը ռուսական հեռուստատեսությամբ Վ. Սոլովյովի «Երեկո» եւ «Մենամարտ» (16. 02. 21017) հաղորդումների ժամանակ բառացիորեն հայտարարեց. «Ես բռնադատվածի թոռ եմ, պապս եղել է զինվորական, ում բռնադատել են ու սպանել, բայց ես արդարացնում եմ Ստալինի քաղաքականությունը»: «Մենամարտ»-ում հաղթեց ստալինապաշտ Կուրղինյանը, պարտվեց հակաստալինյան Լեոնիդ Գոզման՝ ձայների 14177 / 723 հարաբերակցությամբ:

Ըստ վիճակագրության՝ մեկ տարում՝ 2016-ի մարտից մինչեւ 2017-ի մարտ, հանրային կարծիքը ՌԴ-ում Ստալինի օգտին աճել է՝ 37-ից հասնելով 47 տոկոսի:

ՌԴ ԳԱ ակադեմիկոս, պատմաբան Յուրի Պիվովարովը նույն Սոլովյովի՝ այս անգամ «Կիրակնօրյա երեկո» (24. 09. 2017) հաղորդման ժամանակ հայտարարեց. «Մենք ստալինյան Ռուսաստան ենք: Մերը Ստալինն է: Բոլոր քաղաքներում պետք է դրվի Ստալինի արձանը, եւ նրա անունով պետք է անվանակոչվեն փողոցներ, հրապարակներ, մետրոպոլիտենի կայարաններ»:

Այնպես որ զգուշացեք՝ Ստալինը ... վերադառնում է...

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների 6-րդ համագումարը Աստանայում

Հոկտեմբերի 10-11-ը Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում տեղի ունեցավ Համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների 6-րդ համագումարը, որին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ներկայացրեցին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ, համագումարի գործադիր կոմիտեում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ Մարկոս եպս Հովհաննիսյանը:

«Կրոնական առաջնորդները հանուն անվտանգ աշխարհի» լիագումար նիստից հետո՝ երկօրյա ժողովի ընթացքում, տեղի ունեցան առանձին քննարկումներ՝ «Աշխարհ. 21 դար» հայտարարությունն իբրեւ համաշխարհային անվտանգության հայեցակարգ», «Կրոնները փոփոխվող աշխարհաքաղաքականության մեջ. նոր հնարավորություններ մարդկության համախմբման համար», «Կրոնը եւ համաշխարհայնացումը. մարտահրավերներ ու պատասխաններ» եւ «Կրոնական առաջնորդներն ու քաղաքական գործիչները ծայրահեղականության եւ ահաբեկչության հաղթահարման գործում» թեմաներով:

Համագումարի շրջանակներում կատարվեց նաեւ Խաղաղության եւ համերաշխության թանգարանի պաշտոնական բացումը:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.10.2018 թ.
Տպաքանակը՝ 1175